



Գործընկերություն հանուն լավ կառավարման (ԳԼԿ II) 2019-2022թթ.

Տարածաշրջանային ծրագիր՝ Արդարադատության մատչելիության
խթանում Արևելյան գործընկերության երկրներում խտրականության,
ատելության հիմքով կատարվող հանցագործությունների և ատելության
խոսքի զոհերի համար ոչ դատական կարգով փոխհատուցման
մեխանիզմների միջոցով

Ո՞րն է ծրագրի նպատակը

- ▶ Խթանել արդարադատության մատչելիությունը Արևելյան գործընկերության երկրներում խտրականության, ատելության հիմքով կատարվող հանցագործությունների և ատելության խոսքի զոհերի համար ոչ դատական կարգով փոխհատուցման մեխանիզմների միջոցով:

Ովքե՞ր են ծրագրի շահառուները

- ▶ Լայն հասարակությունը և խտրականության, ատելության հիմքով կատարվող հանցագործությունների և ատելության խոսքի զոհերը կօգտվեն իրենց իրավունքների ավելի արդյունավետ պաշտպանությունից ոչ դատական կարգով փոխհատուցման մեխանիզմների միջոցով:
- ▶ Հավասարության հարցերով զբաղվող մարմինները և (կամ) Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակները:
- ▶ Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, որոնք աշխատում են խոցելի համայնքների հետ կամ ներկայացնում են նրանց:
- ▶ Արդարադատության նախարարությունները, Ներքին գործերի նախարարությունները, դատական և իրավապահ մարմինները:

Ինչպե՞ս է իրականացվում ծրագիրը

- ▶ Ներպետական գործընկերների հետ սերտ համագործակցությամբ:
- ▶ Տարածաշրջանային միջոցառումների և հաղորդակցման միջոցով, որոնք նպաստում են գործընկերների կողմից

Ի՞նչ արդյունք ենք ակնկալում

- ▶ Խտրականության, ատելության հիմքով կատարվող հանցագործությունների և ատելության խոսքի մասին օրենսդրության բարելավում և կիրառում մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին համապատասխան:

լավագույն փորձի յուրացմանը:

- ▶ Տվյալ երկրի կոնկրետ կարիքների բավարարման համար մշակված մոտեցումների կիրառմամբ:
- ▶ Ծրագիրը հիմնված է խտրականության դեմ պայքարի ոլորտում համագործակցության ԳԼԿ 1-ին փուլի (2015-2018թթ.) շրջանակներում արձանագրված արդյունքների վրա:

- ▶ Ատելության հիմքով կատարվող հանցագործությունների վերաբերյալ տարանջատված տվյալների հավաքման ընթացակարգերի և գործիքների առավել բարելավում:
- ▶ Հավասարության հարցերով զբաղվող մարմինների և (կամ) Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակների և ՀԿ-ների՝ խտրականության հիմքով բողոքների ներկայացման հարցում ոչ դատական կարգով փոխհատուցման համապատասխան մեխանիզմների միջոցով խոցելի խմբերի տղամարդկանց և կանանց օժանդակության կարողությունների ընդլայնում:
- ▶ Ներպետական շահագրգիռ կողմերը մոբիլիզացված և վերազինված են ատելության խոսքի դեմ համատեղ պայքարելու համար՝ մարդու իրավունքների չափանիշներին համապատասխան:

Որքա՞ն է ծրագրի արժեքը

- ▶ Ընդհանուր բյուջեն կազմում է 1,714,000 եվրո:
- ▶ Ծրագիրը 80%-ով ֆինանսավորվում է ԵՄ-ի և 20%-ով՝ Եվրոպայի խորհրդի կողմից: Ծրագիրն իրականացնում է Եվրոպայի խորհուրդը:

Որքա՞ն է ծրագրի տևողությունը

- ▶ Ծրագրի տևողությունն է 2019 թվականի փետրվարի 1-ից մինչև 2022 թվականի օգոստոսի 31-ը:

Ինչպե՞ս ստանալ հավելյալ տեղեկություններ

- ▶ Եվրոպայի խորհրդի խտրականության դեմ պայքարի բաժնի Ատելության խոսքի դեմ պայքարի և Համագործակցության բաժանմունք (Ժողովրդավարության հարցերով գլխավոր տնօրինություն):

Ծրագրի թիմը Ստրասբուրգում՝

- ▶ Ծրագրի թիմը Ստրասբուրգում՝
 - ▶ Ստեֆանո Վալենտի, Բաժնի ղեկավար stefano.valenti@coe.int
 - ▶ Անջելա Լոնգո, Ծրագրի համակարգող angela.longo@coe.int

Մա տարածաշրջանային ծրագիր է, որում ընդգրկված են Արևելյան գործընկերության երկրները (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն, Ուկրաինա և Բելառուս¹) և որն իրականացվում է «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակներում (2-րդ փուլ կամ ԳԼԿ II):

2014 թվականի ապրիլին Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը համաձայնել են, որ թիրախային համագործակցության միջոցառումները ԵՄ Արևելյան գործընկերության երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ուկրաինայի և Բելառուսի հետ կիրականացվեն «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակներում: Ծրագրի 1-ին փուլը (ԳԼԿ I) մեկնարկել է 2015 թվականին և ավարտվել 2018 թվականին: Ծրագրի երկրորդ փուլը (ԳԼԿ II) մեկնարկել է 2019 թվականին և կտևի մինչև 2022 թվականի օգոստոս:

Համագործակցության այս միջոցառումները կհզորացնեն Արևելյան գործընկերության երկրների կարողությունները, որոնք Եվրոպայի խորհրդի անդամ պետություններ են, բացառությամբ Բելառուսի՝ մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության ոլորտներում եվրոպական չափանիշներին ավելի սերտ հաղորդակից դարձնելուն միտված ներպետական բարեփոխումներ իրականացնելու նպատակով:

¹ Բելառուսում ստեղծված քաղաքական իրավիճակով պայմանավորված՝ այդ երկրի հետ համագործակցային միջոցառումները կասեցված են և ԳԼԿ II-ի իրականացման մնացյալ ժամանակահատվածի համար դեռևս նոր գործողություններ նախատեսված չեն՝ Եվրոպական միության ընդունած սահմանափակող միջոցների համաձայն: